Ինչպե՞ս կարող եմ դրախտ գնալ

Վերներ Գիտ

Ինչպե՞ս կարող եմ դրախտ գնալ

Շատ մարդիկ փորձում են չմտածել հավիտենականության մասին: Նույնիսկ այն մարդիկ ովքեր մտածում են մահվան մասին, փորձում են չմտածել, թե ինչ է լինելու հետո: Ամերիկացի դերասանուհի Դրու Բերրիմորը (ծնված 1975թ.) երեխա ժամանակ «Այլմոլորակայինները» ֆանտաստիկ ֆիլմում նկարահանվել է գլխավոր դերում ու դարձել կինոաստղ: Երբ 28 տարեկան է դառնում, հայտարարում է. «Եթե ես իմ կատվից շուտ մահանամ, ապա կցանկանայի, որ իմ աճյունը տաին նրան ուտելու: Այդ կերպ գոնե իմ կատվի մեջ էլի կապրեմ:» Արդյոք զարհուրելի չէ՞ այսպիսի անիմացությունը և կարճատեսությունը մահվան մասին:

Հիսուսի ժամանակ, Իր մոտ էին գալիս շատ մարդիկ: Նրանց կարիքները Հիմնականում առնչվում էին երկրային կյանքի հետ:

- **Տասը բորոտները ցանկանում էին բուժվել** (Ղուկաս 17:13):
- **Կույրերը ցանկանում էին տեսնել** (Մատթեոս 9:27):
- **Մեկն էլ սպասում էր օգնություն ժառանգության բաժանման հարցում:** (Ղուկաս 12:13-14):
- **Փարիսեցիները եկան խորամանկ հարցով, թե արդյո՞ք կայսրին հարկ տալ է պետք** (Մատթեոս 22:17):

Քչերն էին եկել Հիսուսի մոտ, որ իմանային, թե ինչպես կարող է մարդը դրախտ գնալ: Մի երիտասարդ հարուստ մարդ մոտեցավ Նրան ու հարցրեց. ***«Բարի Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ ժառանգեմ հավիտենական կյանքը»*** (Ղուկաս 18:18): Հիսուսն էլ նրան ասաց, որ վաճառի այն ամենը, ինչին իր սիրտը կպած էր ու հետևի Իրեն: Քանի որ, նա շատ էր

իր հարստությանը կապված չհետևեց Հիսուսի խորհրդին ու հրաժարվեց դրախտից: Կային մարդիկ ովքեր չէին փնտրում դրախտը, բայց հանդիպելով Հիսուսին, իմացան այդ մասին ու օգտագործեցին այդ հնարավորությունը: Զաքեոսը փափակում էր Հիսուսին միայն տեսնել, բայց ստացավ ավելին, քան ինքն էր ակնկալում: Երբ Հիսուսն այցելեց նրա տունը և ճաշկերույթի պահին Հիսուսն ասաց. ***«Այսօր փրկություն եղավ այս տանը»*** (Ղուկաս19:9)

Ինչպե՞ս կարող եմ գտնել դրախտը

Արդեն մինչև այժմ ասվածից կարելի է եզրակացնել, որ

- Երկնային արքայությունը մարդ կարող է գտնել մի հատուկ օր: Սիրելի ընթերցող, կարևոր է իմանալ, որ Դուք այսօր կարող եք հավիտենական կյանք ունենալ Հիսուսով:
- Երկնային արքայություն գտնելը կապ չունի ինչ- որ պարտականություն կատարելուց:
- Երկնային արքայությունը կարող է մարդ առանց պատրաստության գտնել: Դրախտ գնալու մեր բոլոր ծրագրերը զուր են, եթե դրանք հիմնված չեն Աստծո Խոսքի վրա:

Մի ծաղրածուի մասին՝ ով երկար տարիներ կրկեսում էր ու հիմա հեռանում էր կյանքից, մի երգչուհի երգում էր. «Նա ճիշտ դրախտ կգնա քանի, որ ուրախություն է պատճառել մարդկանց»: Մի հարուստ կին աղքատների համար տուն կառուցեց, որտեղ 20 կանայք առանց վճարելու կարող էին ապրել: Միայն մեկ պայմանով, որ այդ կանայք ամեն օր մեկ ժամ աղոթեին այդ հարուստ կնոջ հոգու փրկության համար:

Ի՞նչը իրականում մեզ դրախտ կտանի

Այս հարցին հստակ պատասխանելու համար Հիսուսը մի առակ պատմեց: (Ղուկաս 14:16)-ում, Նա խոսում է մի մարդու մասին (առակում այդ

մարդը Աստված Ինքն է), ով պատրաստվում էր մի մեծ խնջույքի: Նա ուղարկում է անձնական հրավերներ, սակայն բոլորի պատասխաններն էլ հիասթափեցնող էին: Առաջինն ասաց. ***«Ագարակ եմ առել...»***, երկրորդը ասաց. ***«Հինգ լուծ եզ եմ առել...»***, երրորդ թե. ***«Կնիկ եմ առել ու դրա համար չեմ կարող գալ»***: Հիսուսն առակը ավարտում է հրավիրողի խոսքերով. ***«Որովհետև ասում եմ ձեզ, թե այն կանչված մարդկանցից ոչ մեկը իմ ընթրիքը չի ճաշակի»*** (Ղուկաս 14:24):

Այստեղից հետևություն, երկնային արքայությունը կարելի է գտնել կամ կորցնել: Որոշիչը հետևյալն է. ընդունել կամ մերժել հրավերը: Պարզ չի՞ արդյոք սա:

Երբ մի օր մարդիկ դրախտից դուրս մնան, պատճառը ոչ թե ճանապարհը չիմանալն է լինելու, այլ հրավերը չընդունելը: Առակի երեք մարդիկ մեր համար ընդօրինակելի չեն: Նրանք մերժեցին հրավերը: Չկայացա՞վ արդյոք խնջույքը նրանց պատճառով: Ոչ: Տանտերը հրավեր ուղարկեց ամենուր, բայց այս անգամ, ոչ թե ոսկետառ անձնական հրավեր, այլ պարզ կանչ «Եկե՛ք»: Ով ընդունի հրավերը նա տեղ ունի խնջույքում: Հրավեր ստանալուց, բազում մարդիկ եկան խնջույքին: Տանտերը տեսնելով, որ դեռ տեղեր կան, նա ասաց իր ծառաներին. ***«Նորից գնացե՛ք, հրավիրեցե՛ք ուրիշներին»***:

Այժմ կցանկանայի տեսնել, թե առակն ինչ կապ ունի մեզ հետ: Դրախտում դեռ տեղ կա և Աստված մեզ կանչում է. «Եկե՛ք ու զբաղեցրե՛ք ձեր տեղերը

դրախտում: Եղի՛ր իմաստուն ու զբաղեցրու՛ քո տեղը երկնքում: Արա՛ սա այսօր»:

Դրախտը հիանալի է, դրա համար էլ Հիսուսն համեմատում է խնջույքի հետ: 1Կորնթացիս 2:9-ը ասում է. ***«Այն բաները, որոնք մարդու աչքը չի տեսել և ականջը չի լսել ու սիրտն չեն մտել, Աստված Իրեն սիրողներուն համար պատրաստեց»***: Երկրի վրա չկա ո՛չ մի բան, որ համեմատելի լիներ երկնքի հետ: Աննկարագրելի հրաշալի է երկինքը, մենք չենք կարող բաց թողնել դրախտ մտնելու առիթը: Աստծո որդին՝ Հիսուսն է բացել մեզ համար երկինք տանող ճանապարհը: Նա է այն մեկը, ով այդքան հեշտ դարձրեց երկինք գնալը: Հիմա ամեն ինչ մեր կամքից է կախված, միայն նրանք կմերժեն Աստծո հրավերը, ովքեր առակի մարդկանց նման կարճատես են:

Փրկություն Տեր Հիսուսի միջոցով

(Գործք Առաքելոց 2:21) կարդում ենք մի շատ կարևոր միտք ***«Ամեն ով որ Տիրոջ անունը կկանչե կփրկվի»***: Երբ Պողոսը Փիլիպեում բանտարկված էր, նա այս համարն ամփոփում է բանտապահի հետ խոսակցության ժամանակ՝ ասելով. ***«Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվես դու և քո տունը»*** (Գործք Առաքելոց 16:31): Հատվածն ամփոփ է, բայց շատ ազդեցիկ ու կյանք փոխող: Բանտապահը հենց նույն գիշերը ապաշխարհեց:

Մի բան կա, որ մենք անպայման պետք է իմանանք. Հիսուսը ուզում է մեզ փրկել մի ճանապարհից, որը տանում է դեպի հավիտենական դատապարտություն՝ դժոխք: Աստվածաշունչն ասում է, որ մարդիկ իրենց հավիտենականությունը անցկացնելու են դրախտում կամ դժոխքում: Նրանցից մեկը հիանալի է, մյուսը սարսափելի: Այլընտրանք չկա, մահանալուց հետո ոչինչ հնարավոր չի փոխել: Մեր երկինք գնալը կորոշվի ըստ Հիսուսի հետ ունեցած հարաբերության:

Երբ ես լեհաստանում էի, մենք այցելեցինք ֆաշիստական «Օսվենցիում» ճամբարը, որտեղ 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ սարսափելի բաներ էին տեղի ունեցել: 1942-

1944թթ. Ընթացքում 1.6 միլիոն մարդ, հատկապես հրեաներ,սպանվեցին և նրանց մարմինները այրվեցին: Գրականության մեջ այն անվանում են «Օսվենցիումի դժոխք»: Էքսկուրսավարը մեզ ցույց տվեց մի սրահ, որն օգտագործել էին միանգամից 600 հոգի գազով սպանելու համար: Այդպիսի սարսափելի բանը մադու պատկերացումից վեր է: Սակայն դա արդյո՞ք դժոխքն էր:

Մենք կարողացանք այցելել գազի այդ սրահները, որովհետև այդ մղձավանջն ավարտվել էր 1945թ: «Օսվենցիումի գազի դժոխքը» ժամանակավոր էր, դժոխքը Աստվածաշնչում նկարագրված, հավերժ է:

Օսվենցիումի թանգարանի մուտքի մոտ պատկերված է Քրիստոսի մարմինը խաչին գամված: Գերիներից մեկը մեխի օգնությամբ պատի վրա ցույց էր տվել իր հույսը՝ խաչյալ Հիսուսը: Այս նկարիչը ճանաչում էր Հիսուս Փրկչին: Չնայած նա մահացավ այդ սարսափելի վայրում, երկինքը իր համար բաց էր: Դժոխքից, որի մասին համոզիչ ձևով Նոր Կտակարանում խոսում է Հիսուսը (Մաթ. 7:13, 5:29-30, 18:8) մարդուն չկա ո՛չ ազատվել և ո՛չ էլ փրկվել: Քանի որ դժոխքը հավերժ է, մարդ չի կարող նաև այցելել այնտեղ:

Դրախտը նույնպես հավիտենական է: Սա մի տեղ է, ուր Աստված ցանկանում է մեզ տանել: Դե ուրեմն ընդունե՛ք հրավերը և եկե՛ք Հիսուսին: Կանչեցե՛ք Իր անունը և պատվիրեցե՛ք ձեր համար տեղ երկնքում: Մի անգամ մի կին մոտեցավ ինձ, շատ տխուր ու ասաց. «Ինչպե՞ս կարող է մեկը դրախտ գնալու տոմս պատվիրել, սա նման է ճանապարհորդական գործակալության»: Ես համաձայնվեցի. «Ով չի պատվիրում, նա չի կարող հասնել նպատակին: Եթե ցանկանում եք Դուք Հավայան կղզիներ գնալ, ապա էլի տոմս պետք է պատվիրել»: Նա պատասխանեց. «Բայց տոմսի համար պետք է վճարել»: Ես ասացի. «Այո երկինք գնալու համար ևս պետք է վճարել: Բայց այն այնքան թանկ է, որ ոչ ոք չի կարող այն գնել: Մեր մեղքերը թույլ չեն տալիս, որ դրախտ գնանք և Աստված էլ թույլ չի տալ, որ մեղքերը երկինք մտնեն: Ով ցանկանում է իր հավիտենականությունն Աստծո հետ անցկացնել, նա պետք է նախ ազատվի իր մեղքերից: Այդ կարող է անել մեկը, որն անմեղ է

և անարատ և այդ անձը Հիսուս Քրիստոսն է: Նա կարող է բոլորի համար վճարել: Ու վճարել է Իր արյունով, Իր մահով խաչի վրա»:

Այսպիսով. «Ես ի՞նչ անեմ, որ երկինք գնամ»: Աստվածաշնչի շատ տեղեր մեզ հրավիրում են դեպի երկինք, դրան մեզ պետք է արձականքել:

- ***«Ջանք արեք, որ նեղ դռնովը ներս մտնեք, որովհետև ասում եմ ձեզ, շատերը կուզեն մտնել և չեն կարողանալ»*** (Ղուկաս 13:24):
- ***«Ապաշխարեցեք, որովհետև մոտեցել է երկնքի թագավորությունը»*** (Մատթեոս 4:17):
- ***«Նեղ դռնովը ներս մտեք, որովհետև լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը, որ կորուստն է տանում և շատեր են նրանով գնացողները: Քանի նեղ է դուռը և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք և քիչ են նրան գտնողները»*** (Մատթեոս 7:13-14):
- ***«Բռնիր հավիտենական կյանքը, որի մեջ կանչվեցար»*** (1 Տիմոթեոս 6:12):
- ***«Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվես»*** (Գործք Առաքելոց 2:21):

Այս ամենը շատ համոզիչ հրավեր է: Մարդ կարող է զգալ տեքստի անկեղծությունը և անհետաձգելիությունը: Միակ խոհեմ քայլը, հրավերն ընդունելն է՝ այսպիսի մի աղոթքով.

«Տեր Հիսուս ես ապրել եմ մինչ հիմա առանց Քեզ: Հիմա ես ճանաչեցի Քեզ և դրա համար խնդրում եմ Քեզ, ներիր իմ մեղքերը և փրկիր ինձ դժոխքից, որին ես արժանի եմ իմ մեղքերի, առանձնապես իմ անհավատության պատճառով: Դու տեսնում ես իմ բոլոր մեղքերը մանկությունից մինչև հիմա: Դու գիտես իմ սիրտը: Ես զղջում եմ իմ բոլոր մեղքերի համար: Խնդրում եմ օգնիր ինձ մաքրվել այն բոլոր բաներից, որոնք խանգարում են ինձ Քեզ հետ լինել:

Արի իմ կյանքի մեջ և այն նորոգիր, բաց արա ինձ Քո Խոսքը՝ Աստվածաշունչը , որ լավ հասկանամ ու լսեմ Քո ձայնը: Հիմա ես Քեզ ընդունում եմ, որպես ինձ Տեր ու անձնական Փրկիչ: Տուր ինձ խոնարհ սիրտ, որ կարողանամ Քո կամքը կատարել: Ես շնորհակալ եմ Քեզանից Քո բոլոր խոստումների համար, որ հիմա ես Քեզ ընդունելով Աստծո զավակ դարձա և կլինեմ երկնքում Քո հետ հավիտյան: Խնդրում եմ ցույց տուր մարկանց, որոնք անկեղծությամբ հետևում են Քեզ, որ ես հաղորդակցվեմ նրանց հետ: Ամեն:»

Վերներ Գիտ
դոկտոր պրոֆեսոր

Թերթիկի գերմաներեն անունը. Wie komme ich in den Himmel?
Հեղինակի ինտերնետային էջը. www.wernergitt.de
Թարգմանությունը. Վահան և Էլմիռա

Bruderhand-Medien
Am Hofe 2; 29342 Wienhausen; Germany
Tel.: +49 (0) 51 49 98 91-0, Fax:-19
E-Mail: info@bruderhand.de; Homepage: bruderhand.de

Nr. 120-37: Armenisch/Armenian, 4th edition 2021